

Մարմնի շարժման արագությունը միավոր ժամանակում նրա անցած ճանապարհն է:

70կմ/ժ արագություն ասելով հասկանում ենք, որ մարմինը 1ժ-ում անցել է 70կմ ճանապարհ:


Արագություն = Ճանապարհ : Ժամանակ

Ճանապարհ = Ժամանակ · Արագություն


Ժամանակ = Ճանապարհ : Արագություն

Խնդիրներ


- Բեռնատարը 740 կմ ճանապարհի առաջին 320կմ-ն անցավ 80կմ/ժ արագությամբ, իսկ մնացած մասը՝ 60կմ/ժ արագությամբ: Բեռնատարը քանի՞ ժամում անցավ այդ ճանապարհը:




- Գնացքը 2 օրում միևնույն արագությամբ անցավ 1620կմ ճանապարհ: Առաջին օրը նա ճանապարհի վրա ծախսեց 10 ժամ, իսկ երկրորդ օրը՝ 2 ժամ պակաս: Որքա՞ն ճանապարհ նա անցավ առաջին օրը:




- A քաղաքից միննույն ուղղությամբ դուրս եկան երկու ավտոմեքենա: 8 ժամ հետո որքա՞ն կլինի նրանց միջև եղած հեռավորությունը, եթե առաջին ավտոմեքենան ժամում անցնում է 60կմ, իսկ երկրորդը՝ 80 կմ:



- Երևանից հակադիր ուղղություններով շարժվեցին երկու ավտոմեքենա: Քանի՞ ժամ հետո նրանց միջև եղած հեռավորությունը կլինի 780կմ, եթե մեկը շարժվում է 70կմ/ժ արագությամբ, իսկ մյուսը՝ 10կմ/ժ-ով պակաս արագությամբ:



- 480կմ հեռավորության վրա գտնվող 2 քաղաքներից միաժամանակ իրար հանդիպակաց դուրս եկան երկու ավտոմեքենա և հանդիպեցին 3 ժամ հետո: Առաջինը գնում էր 60կմ/ժ արագությամբ: Որոշիր երկրորդ մեքենայի արագությունը:



- A քաղաքից միաժամանակ հակադիր ուղղություններով դուրս եկան երկու ավտոմեքենա : Առաջինի արագությունը 70կմ/ժ էր, իսկ երկրորդինը՝ 20 կմ/ժ -ով ավելի: Որքա՞ն կլինի նրանց հեռավորությունը 3 ժամ հետո:

